Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արարատ համայնք 02 ապրիլ 2024թ.

«ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՂԱԶԱՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՄԱԴ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Արարատ քաղաքի Ղ.Սարյանի անվան ՄՄԱԴ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի (այսուհետ՝ Տնօրեն) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2025 թվականի մայիսի 2-ին ժամը 11:00-ին, Արարատի համայնքապետարանի շենքում /ք.Արարատ, Շահումյան 34/ կանցկացվի մրցույթ:

1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.

2) հանրային ծառայության առնվազն 4 տարվա ստաժ կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ:

2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,

1) ով դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ վերացված չէ.

2) ում օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ զրկվել է որոշակի գործունությամբ զբաղվելու իրավունքից.

3) ով նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.

4) 65 տարին լրացած քաղաքացիները.

5) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմող քաղաքացիները Արարատի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝

- դիմում.
- մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
- քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
- ինքնակենսագրություն.

- անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փատաթղթի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Դիմողները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2025 ապրիլի 17-ը մինչև ժամը 17:00-ն:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Արարատի համայնքապետարանի աշխատակազմ /ք.Արարատ, Շահումյան, 34, հեռ. 060-88-55-55/: